«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԴԵՐԸ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵՋ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅԱՆ,ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Առարկան՝ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Հետազոտող ուսուցիչ՝ ՍՅՈՒԶԱՆՆԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Ուսումնական հաստատություն՝ ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՔԱՂԱՔԻ Վ.ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 10 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ

Երևան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

Գրականության ակնարկ 5

ԳԼՈՒԽ1. ՈՒՍՈՒՑԱՆ ԴԵՐԸ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵՋ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅԱՆ, ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԱՐԳԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ 7

ԳԼՈՒԽ2. ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԵԹՈԴՆԵՐ 9

ԳԼՈՒԽ3. ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԱՐԳԱՑՈՒՄԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԱԿԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ 17

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 21

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 23

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ազատություն նշանակում է պատասխանատվություն: Ահա թե ինչու են շատերը վախենում դրանից:

Բեռնարդ Շոու

Ազատ է ապրում նա, ով ուրախությունը գտնում է իր պարտքը կատարելու մեջ:

Ցիցերոն

Գլոբալացվող և սրընթաց զարգացումների աշխարհում, երբ ավանդույթներն իրենց դաստիարակիչ և ուղղորդող գործառույթները կորցնում են, մարդու ինքնուրույնությունը, որպես անձնային որակ առանձնահատուկ կարևորություն է ձեռք բերում: Ինքնուրույնությունը սեփական կյանքը կազմակերպելու, սեփական հոգևոր ու մտավոր հնարավորությունները գիտակցելու, գնահատելու և ըստ այդմ իր զարգացման ուղին ընտրելու մարդու ընդունակությունն է: Ինքնուրույնության բարձր մակարդակը մատնանշում է մարդու սեփական ուժերի հանդեպ վստահությունը, ինքնագիտակցության և հետևաբար, նաև հավակնությունների բավարար մակարդակի առկայությունը: Սակայն, նման որակը դատարկ տեղում չի ձևավորվում. հանրա-կրթական համակարգից պահանջվում է մշակել ինքնուրույնության կայացմանը սատարող ռազմավարություն և իրացնել այն ինչպես կրթության բովանդակությամբ ու գնահատման համակարգով, այնպես էլ ուսուցման տեխնոլոգիաներով:

Ինքնուրույնության ձևավորման նախապայմանը ազատությունն է: Որպեսզի սովորողը ինքնուրույն ուսումնական գործունեություն ծավալի, նրան անհրաժեշտ է այդ հնարավորությունը տալ: Կրթության յուրաքանչյուր հաջորդ աստիճանում աշակերտի ազատության սահմանները պիտի ավելի ընդարձակվեն: Ինքնուրույնությունը կարող է ձևավորվել միմիայն համապատասխան գործունեության պրոցեսում: Եթե երեխային սովորեցնում ենք պարտադրաբար, եթե նրան ուսումնական գործունեության ազատություն, սխալվելու և սեփական սխալների հիման վրա ճշմարիտ ճանապարհ դուրս գալու իրավունք չենք տալիս, երբեք նրանից ինքնուրույն մարդ չի ձևավորվի: Սովորողի հնարավորինս ազատ ուսումնական գործունեություն ծավալելու իրավունքի ոտնահարումը շատ հոգեբանական վնասների պատճառ է դառնում: Երեխաների ինքնագիտակցությունը զարգանում ու զորանում է մարդկանց հետ շփումների արդյունքում: Բայց, եթե այդ շփումները պարտադրված բնույթ են ստանում, սովորողը կորցնում է իր կարևորության գիտակցությունը, նա իրեն տեսնում է մանկավարժական ներգործությունների օբյեկտի դերում: Սահմանափակելով նրա ինքնուրույնության ու ինքնատիպության դրսևորումները՝ դպրոցը չի թողնում երեխային գիտակցել ինքն իրեն, զգալ իր ներունակ հնարավորություններն ու լավագույնս դրսևորել դրանք: Արդյունքում ձևավորվում է, այսպես կոչված, ֆունկցիայի մարդը: Եթե նա քիչ թե շատ խելացի է՝ կարող է լավ կատարել հանձնարարություններ, իսկ ահա ստեղծագործաբար աշխատել, խնդիր դնել, ծրագիր ու պլան կազմել և ինքնուրույն իրականացնել դրանք՝ ի վիճակի չէ. նա չունի ինքն իր հանդեպ այդ վստահությունը: Պարտադրանքը սպանում է մարդու մեջ աշխարհի հանդեպ ամեն մի

հետաքրքրություն: Չկա հետաքրքրություն՝ չկա կայուն ուսումնական մոտիվացիա, որը հիմնարար գիտելիքներ ձեռք բերելու գլխավոր երաշխիքն է:

Ինքնուրույնության գաղափարի համատեքստում ուսուցչի համար կարևոր խնդիր է դառնում ուսուցման գործընթացն աստիճանաբար ինքնուսուցման գործընթացի վերածելը:

Ինքնուսուցման պարագայում սովորողն ինքն է կազմակերպում, կարգավորում և հսկում իր իմացական գործունեությունը: Ինքնուսուցումը իմացական գործունեության բարձրագույն մակարդակն է, երբ անձը պատրաստ է ինչ-որ չափով դուրս գալ ուսումնական պահանջների սահմաններից, անցնել ազատ իմացական գործունեության, ինքն իր առաջ դնելով խնդիրներ՝ պայմանավորված իր հնարավորությունների գիտակցմամբ ու հաշվառմամբ: Աշակերտին ինքնուսուցման ճանապարհ դուրս բերելու խնդիրը ենթադրում է նրա մեջ սաղմնավորել և զորացնել ինքնակրթության պահանջմունքն ու ինքնակատարելագործման կիրքը, ինչպես նաև զարգացնել վերջիններիս բավարարման համար անհրաժեշտ ընդունակությունները:

Ինքնուրույն ուսումնական աշխատանքներ լավագույնս կարելի է իրականացնել ուսուցման գործընթացը մասնակիորեն հետազոտական գործընթացի վերածելով: Ասել է, թե՝ սովորողների ուսումնական գործունեությունը կազմակերպել որպես ուսումնահետազոտական գործունեություն: Ուսումնական աշխատանքները, որ կատարում է սովորողը դպրոցում, թե տանը, պետք է ունենան իրենց մեջ հետազոտական գործունեության տարրեր և այդօրինակ գործունեության չափաբաժինը կրթության յուրաքանչյուր հաջորդ աստիճանում համապատասխան չափով ավելանա:

Ուսումնահետազոտական գործունեությունը ենթադրում է սովորողի ստեղծագործական ընդունակությունների արթնացում ու ակտիվացում: Ուսումնառությունը հետևողականորեն վերածելով ակտիվ ստեղծագործական աշխատանքի հանրակրթական դպրոցը դրանով իսկ պայմաններ կստեղծի այսպես կոչված ստեղծագործ (կրեատիվ) անձի ձևավորման համար, ինչը բոլոր ժամանակներում (և մեր ժամանակներում՝ առավել ևս) համարվել ու համարվում է անձի ամենակարևոր որակը: Ստեղծագործական ակտիվության չափանիշներ կարող են համարվել ինտելեկտուալ նախաձեռնության դրսևորումը, օպտիմալ մոտիվացիայի առկայությունը, ստեղծագործական ընդունակությունների և կարողությունների զարգացման մակարդակը, ինքնուրույնության դրսևորումը և ուսումնաիմացական գործունեության ինքնակազմակերպման ընդունակությունը:

Այսպիսով, ամեն ինչի հիմքում ազատության գաղափարն է. վստահել մարդուն և հնարավորություն տալ նրան ընտրելու կրթության սեփական ուղի, օգնել նրան սեփական ճանապարհին անցնելու: Պարտադիր ուսուցումը, ենթատեքստում ունի սովորողի հանդեպ անվստահության մտայնությունը, ինչը, ինչպես արդեն քանիցս կրկնեցինք, մարդուն զրկում է իր ամենացանկալի որակից՝ ինքնուրույնությունից, նաև աշխարհի հանդեպ կենդանի և ակտիվ հետաքրքրությունից:

Մանկավարժները հաճախ առարկում են, թե երեխան հասունացած չէ ինքնուրույնության, նախաձեռնության համար և իրեն նվիրած ազատությունը կարող է չարաշահել՝ մատնվել անգործության: Այստեղ ճշմարտության մի աննշան բաժին կա: Բայց դպրոցի խնդիրն էլ հենց օգնելն է աշակերտին՝ գիտակցել ազատության ու պատասխանատվության դիալեկտիկան: Անառարկելի ճշմարտություն է, որ ազատությունը սովորում են գնահատել ազատ ապրելու պայմաններում, մտածել,

պրոբլեմներ հաղթահարել սովորում են դրանք լուծելով, ինքնուրույնության սովորում են նման գործունեություն իրականացնելով, ի վերջո՝ մտածել սովորում են մտածելով, ստեղծագործական գործունեության մեջ ներգրավվելով:
Ասվածն հիմք ընդունելով պիտի եզրակացնենք, որ ուսուցման գործընթացի կազմակերպման նոր ձևերի և ուսուցման նոր մեթոդների որոնումներում պետք է որպես ուղենիշ ունենանք այս հիմնական արժեքները. ուսուցման տեխնոլոգիան կամ կիրառվող մեթոդները լավագույնն են, եթե լավագույնս նպաստում են մարդու ինքնուրույնության ձևավորմանը, հիմնարար գիտելիքների ձեռքբերմանն ու ստեղծագործական կարողությունների զարգացմանը:
Հետազոտության նպատակն է՝ բացահայտել սովորողների մեջ ինքնուրույնության , նախաձեռնության և ստեղծագործական ունակությունների զարգացմանը նպաստող արդյունավետ մեթոդները, միջոցներն ու ուղիները:
Հետազոտության խնդիրներն են՝

1.ուսումնասիրել թեմային վերաբերող գիտաուսումնական գրականությունը,

2. կիրառել ինքնուրույնության , նախաձեռնության ունակությունների զարգացմանը նպաստող արդյունավետ մեթոդները, արձանագրել վերջարդյունքները:

3.գտնել սովորողների մեջ ինքնուրույնության , նախաձեռնության ունակությունների զարգացմանը նպաստող ուսուցման լավագույն տարբերակը:

Այսօր ուսուցչին տրված է ազատություն՝ ուսուցման ձևերի և մեթոդների ընտրության համար, պատասխանատվություն՝ չափորոշչային պահանջների ապահովման համար, իսկ ազատությունը, ինչպես հայտնի է, ուղեկցվում է պատասխանատվության մեծացումով:

Գրականության ակնարկ

Սովորողների մեջ ինքնուրույնության , նախաձեռնության ունակությունների զարգացումը առարկայի դասավանդման ընթացքում մշտապես գրավել է մանկավարժական միտքը և առաջատար մանկավարժների ուշադրությունը: Անդրադառնանք նրանց կատարած հետազոտություններին, որպեսզի լավագույնս բացահայտենք թեմայի էությունը:

Ռուս մանկավարժ գիտնականներ Ա. Ա. Արետը, Ա. Գ. Կովալևը, Ա. Ի. Կոչետովը, Լ. Ի. Ռուվինսկին և ուրիշներ հաստատել են, որ անձն ակտիվ է ոչ միայն շրջապատի աշխարհի վերափոխման մեջ, այլ նաև իր անձի վերափոխման մեջ: Անձի զարգացման ու կատարելագործման վրա ազդում է միջավայրի հետ անձի

փոխազդեցությունը, որի արդյունքում տեղի է ունենում իր նկատմամբ գիտակցական, նպատակաուղղված , ինքնուրույն, ստեղծագործական գործունեություն, որ այլ կերպ գիտնականներն անվանում են ինքնադաստիարակություն:

Ինքնադաստիարակությամբ, ինքնազարգացմամբ, որն ինքնուրույնության , նախաձեռնության և ստեղծագործական ունակությունների մի անաձնահատուկ դրսևորում է, զբաղվել են Մ. Գորկին, Լ. Տոլստոյը, պատմաբան Լեոն, Ֆ. Ռուզվելտը և ուրիշներ: Իսկ ինչպե՞ս է այն տեղի ունենում դպրոցում : Նախ պետք է ասենք, որ իրակացվում է ըստ տարիքային փուլերի և կրում է տարբեր բնույթ: Այսպես , օրինակ, կրտսեր դպրոցականների մեջ ի հայտ են գալիս ընդօրինակման , հարմարվելու ձգտումներ դեպի մեծահասակները, դեպի աշխատանքի մարդիկ, դեպի կոլեկտիվները, որոնք իդեալը որոնելու գիտակցության ու ակտիվության արդյունք են: Այս դեպքում մեծ է ուսուցչի դերը և նա կարող է ճիշտ պահին ծրագրավորել իր սաների ինքնուրույնությունն ու նախաձեռնությունը և կողմնորոշել նրանց այսպիսով նպաստելով լավագույն արդյունքի գրանցմանը: Այս ամենին զուգահեռ չի կարելի անտեսել այն, որ մարդը ձևավորվում է գործունեության այն ընթացքում, որը նրա համար ապահովում է իրականության գիտական յուրացումը,առաջացնում հետաքրքրություն, զգացմունքներ , ծնում նոր պահանջմունքներ, ակտիվացնում կամքը, էներգիան, ընդհանրապես այն ամենը, ինչը ծառայում է մարդու զարգացման , լինելիության համար:

Սովորողների մեջ ինքնուրույնության , նախաձեռնության ունակությունների զարգացման ընթացքում պարտադիր կերպով պետք է հաշվի առնել նրանց տարիքային առանձնահատկությունները , առողջական վիճակը, անհատական առանձնահատկությունները:

Հոգեբան Հռիփսիմե Ղաջոյանը գտնում է, որ անձի ինքնուրույնությունից է կախված նրա ընդունակությունների դրսևրումը, իսկ նախաձեռնողականությունից նրա աշխատասիրությունը[1]: Նա գտնում է, որ հենց ինքնուրույնությունն է նպաստում ընդունակությունների բացահայտմանը: Այսինքն, ուսուցիչն օգտվելով այս հանգամանքից, կարող է եզրակացնել, թե սովորողն ինչպիսի ընդունակություններ ունի: Կարող ենք վստահորեն ասել, որ գիտելիքների և հմտությունների ձևավորումն էլ ինքնին տանում է դեպի ընդունակությունների հետագա զարգացմանը: Ուսուցիչն է իրականացնում դասավանդումը: Նա է ղեկավարում աշակերտների ճանաչողական գործունեությունը:Ուսուցման գործընթացը ուսումն է և դասավանդումը: Դասավանդումը ուսուցչի գործունեությունն է, իսկ ուսումը `աշակերտի կամ աշակերտական կոլեկտիվի[1]: Իսկ ահա ռուս գիտնական Մ. Ն. Սկատկինը ուսուցիչներին հորդորում է տեսական պատկերացում ունենալ ուսումնական առարկայի , նյութերի, մանկավարժական գործունեության, աշակերտի անձի մասին:

Այս սկզբունքը յուրաքանչյուր ուսումնական առարկայի ներկայացուցչից պահանջում է միասնական մոտեցում ունենալ կրթության բովանդակության կառուցման նկատմամբ։

ԳԼՈՒԽ1. ՈՒՍՈՒՑՄԱՆ ԴԵՐԸ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄԵՋ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅԱՆ, ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ՈՒ ՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԱՐԳԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Ուսուցման միջոցով ուսուցիչը իրականացնում է սովորողների կրթությունը և զարգացումը։ Կրթություն ասելով պետք է հասկանալ ոչ թե ուսուցչի կողմից աշակերտներին հաղորդվող պատրաստի գիտելիքները, այլ ուսուցիչների և սովորողների փոխազդեցությունները, մանկավարժական գործընթացի իրականացման եղանակը (անձի ձևավորմաննպատակով), որի միջոցով նրանք յուրացնում են գիտական գիտելիքներ և գործունեության եղանակներ։մԱյդ գործընթացը խթանում և կառավարում է դպրոցականների ներքին ու արտաքին ակտիվությունը, որի ընթացքում էլ սովորողները յուրացնում են մարդկության կուտակած փորձը։

Մենք գտնում ենք, որ ուսուցումն ու զարգացումը փոխկապակցված են ու միասնական։ Ուսուցման գործընթացը նպատակաուղղված մանկավարժական գործընթաց է , որը խթանում է սովորողների գործունեությունը՝ գիտական գիտելիքներ, կարողություններ և հմտություններ ձեռք բերելու, իրենց ստեղծագործական ընդունակությունները զարգացնելու, գիտական աշխարհայացք ձևավորելու բարոյական որակներ ու համոզմունքներ սեփականելու, ինքնուրույնությունն ու նախաձեռնությունը զարգացնելու համար։

Այստեղ հարկ ենք համարում նշել, որ ուսուցումն ունի երեք գլխավոր գործառույթ՝ կրթական, դաստիարակչական և զարգացնող։ Կանգ առնենք և մանրամասնենք ուսուցման զարգացնող գործառույթը։

«Զարգացնող ուսուցում » հասկացությունը դիդակտիկայում հանդես է եկել 1960-ական թվականների սկզբներին։ Այս հիմնախնդրին նվիրված աշխատություններ են լույս ընծայել Մ. Ա. Դանիլովը, Լ. Վ. Զանկովը, հոգեբաններ Ն. Ա. Սենչինսկայան, Վ. Վ. Դավիդովը և ուրիշներ։«Զարգացնող ուսուցման » գործառույթների իրականացումը ենթադրում է ազդեցությունների ոլորտների ընդարձակում, ուսումնական գործունեության մեջ ստեղծագործական տարրերի ուժեղացում։ «Զարգացնող ուսուցում » առանձին գոյություն չունի , այն ուսուցման կրթական գործառույթների հետևանք է։ Նշանակում է՝ զարգացման արագացումը, տեմպը առաջին հերթին կախված է այն բանից, թե որքան արդյունավետ կիրականացվի կրթությունն ու

դաստիարակությունը։

Ուսուցման գլխավոր խնդիրն է ձևավորել աշակերտների ինքնուրույն, ստեղծագործական մտածողությունը և այս հիման վրա կենսագործել ուսուցման աստիճանաբար անցումը ինքնուսուցման։ Այս խնդիրը կարելի է լուծել ուսուցման մեթոդների ճիշտ ընտրության և ,իհարկե պրոբլեմային ուսուցման միջոցով։ Իսկ պրոբլեմային ուսուցման գլխավոր առանձնահատկությունն այն է, որ ուսուցիչը կազմակերպում է սովորողների որոնողական գործունեությունը, որի միջոցով նրանք յուրացնում են նոր գիտելիքներ , կարողություններ և հմտություններ , զարգացնում իրենց տրամաբանական մտածողությունը , որոնողական ընդունակություններն ու հետազոտական ակտիվությունը, ձևավորում ստեղծագործական կարողություններ, ցուցաբերում նախաձեռնողականություն։

Մենք սահմանել ենք քայլարշավ և փորձել իրականացնել պրոբլեմային ուսուցումը սովորողների մեջ ինքնուրույնության, նախաձեռնության և ստեղծագործական ունակությունների զարգացման համար.

1. պրոբլեմային իրավիճակի ստեղծում, պրոբլեմի առաջադրում։

2. վարկածի առաջ քաշում . ենթադրություններ պրոբլեմի լուծման հնարավոր ուղիների մասինհ։ Ենթադրությունների հիմնավորում .

3. առաջ քաածնվարկածի փորձարկում, արդյունքի ստուգում,

4 պրոբլեմի լուծում, պրոբլեմային իրավիճակի հաղթահարում,արդյունքների ընդհանրացում, նոր գիտելիքների, կարողությունների յուրացում, դրանց ամրակայումը և կիրառումը պրակտիկայում։

Որպեսզի ուսուցիչը ճիշտ ղեկավարի պրոբլեմային ուսուցման ընթացքը, նա պետք է գիտակցի, լավ ըմբռնի ու հասկանա պրոբլեմային ուսուցման հիմնական հասկացությունների իմաստը, գործառույթները, նա պետք է տիրապետի պրոբլեմային իրավիճակին, ինդրին և հարցին։

ԳԼՈՒԽ2. ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԵԹՈԴՆԵՐ

Ինքնուրույն են կոչվում այն աշխատանքները , որոնք աշակերտները կատարում են ուսուցչի հանձնարարությամբ և կամ ՝ սեփական նախաձեռնությամբ: Սովորողների ինքնուրույն աշխատանքների կատարումները պետք է ունենան փաստերը , երևույթները , օրենքները, օրինաչափությունները ինքնուրույնաբար ճանաչելու, ստեղծագործական գործունեությունը զարգացնելու ուղղվածություն:

Աշակերտներին նախ պետք է սովորեցնել գործել ինքնուրույն, իսկ դրա համար հարկավոր է , որ նրանք գործեն ուսուցչի ղեկավարության պայմաններում: Մենք կարծում ենք, որ եթե ուսուցիչը ցանկանում է, որ իր աշակերտները կատարեն ինքնուրույն աշխատանքներ , ապա նախ նրանք պետք է ունենան գործելակերպ, գործողությունների հստակ պատկերացում: Նրանք պետք է իմանան և իրազեկված լինեն, թե ինչ աշխատանք են կատարելու, ինչ նպատակ են հետապնդում, ինչ խնդիրներ են լուծելու , երբ են սկսելու և ավարտելու աշխատանքը , ինչպես են վերլուծելու ընթացքը և վերջնարդյունքները և այլն: Ինքնուրույն ուսուցման մեթոդներ ընտրելիս Յու. Կ. Բաբանսկին առաջարկում է առաջնորդվել հետևյալ չափանիշներով: Նա նշում է, որ դրանք պետք է համապատասխանեն ՝

1. ուսուցման սկզբունքներին,

2 . ուսուցման նպատակներին,

3. տվյալ թեմայի բովանդակությանը,

4. դպրոցականների ուսումնական և տարիքային հնարավորություններին,

5. դասարանի կոլեկտիվի առանձնահատկություններին,

6. առկա պայմաններին և ուսուցման համար հատկացված ժամանակին,

7. ուսուցիչների հնարավորություններին [1]

Պատմության դասերին մենք իրականացրել ենք ինքնուրույն ստեղծագործական աշխատանքներ: Աշակերտները տարբեր թեմաների շուրջ գրում են ստեղծագործական աշխատանքներ, շարադրություններ, բանաստեղծություններ, պատմվածքներ, հեքիաթներ: Նկարում այս կամ այն ստեղծագործությունը և, որը անմիջական կապ ունի պատմական իրադարձոջթյան հետ այլն:Հանձնարարում ենք արտադասարանական ընթերցանություն , ապա բեմադրում

[1] Бабанский Ю. К. , Методика обучения в совр. общеобразоват. школе, Москва, 1989 ,стр 103,

այդ ստեղծագործությունը, կազմակերպում ենք դերային խաղեր: Իսկ ահա սովորողների յուրացրած գիտելիքները, կարողություններն ու հմտությունները լրիվ չափով ի հայտ բերելու նպատակով կազմակերպում ենք գրական երեկոներ, ցերեկույթներ, ներկայացումներ, գիտական բանավեճեր, աշակերտական գիտական նստաշրջաններ և այլ աշխատանքներ անմիջականորեն կապելով գրականության և պատմության նյութը:

Անդրադառնանք այդ մեթոդներից մի քանիսին՝ երևույթն ավելի լավ ներկայացնելու նպատակով, ինչպես նաև գրանցենք ստացած վերջնարդյունքները:

Ինչպես գիտենք, այսօրվա մարդու կյանքում համակարգիչը հույժ կարևոր դեր ու նշանակություն է ստացել: Այն իր ծառայությունն է բերում նաև հանրակրթության ոլորտին: Էլեկտրոնային դասագրքերն ու ուսումնական նյութերն արդեն ‘սպառնում’ են հետին պլան մղել նրանց թղթային տարբերակները: Համակարգիչը տեղեկույթի ձեռքբերման ու հաղորդման ամենատարածված և ամենաարդյունավետ միջոցն է դարձել: Այս պարագայում առանձնահատուկ կարևորություն է ստանում սովորողների տեղեկատվական մտահասության (կոմպետենտության) պատշաճ մակարդակի ձևավորման խնդիրը:

Տեղեկատվական մտահասությունը ենթադրում է տեղեկույթի տարբեր աղբյուրների (գրքեր, տեղեկատուներ, հանրագիտարաններ, բառարաններ, քարտեզներ) տեղեկատվական սարքերի (հեռուստացույց, մագնիտոֆոն, հեռախոս, ֆաքս, համակարգիչ, տպիչ, մոդեմ) և տեղեկատվական տեխնոլոգիաների (ձայնագրություն և տեսագրություն, էլեկտրոնային փոստ, ԶԼՄ, համացանց) օգնությամբ անհրաժեշտ տեղեկույթը ընտրելու, մշակելու, պահպանելու և հաղորդելու կարողություններ: Կարևորվում են ստացված տեղեկույթը քննադատորեն վերլուծելու, գնահատելու, այն տարբեր ձևերով ներկայացնելու և, սեփական գործունեությունը պլանավորելիս ու իրականացնելիս, դրանք առավելագույն արդյունավետությամբ օգտագործելու կարողությունները: Ուսուցչի խնդիրն է այստեղ համակարգիչը դարձնել սովորողների ուսումնական գործունեության կարևոր միջոց, կրթության ցածր աստիճաններում ապահովել համակարգչային գրագիտության բավարար մակարդակ, իսկ բարձր աստիճաններում ընդլայնել տեղեկատվական տեխնոլոգիաներից օգտվելու հնարավորությունները: Հարկավոր է սովորողների տալ հնարավորություն ինքնուրույնության, նախաձեռնության և ստեղծագործական ունակությունների զարգացման: Երեխան ամենից առաջ զարգացող էակ է և զարգացումն այդ ենթակա է քիչ թե շատ կոշտ օրինաչափությունների: Յուրաքանչյուր տարիքում մարդը հասնում է զարգացման մի միջին մակարդակի, որն հնարավորություն է տալիս նրան յուրացնել-իմաստավորել աշխարհի մասին գիտելիքների ու հասկացությունների մի սահմանափակ ոլորտ: Այն բոլոր գիտելիքները, որոնք գտնվում են այդ ոլորտից դուրս՝ նա չի կարող յուրացնել, սեփականել: Բարդ ուսումնական ծրագրերն ու դասագրքերը այս ղեկավար գաղափարի անտեսման՝ մարդու ֆիզիկական և հոգեկան զարգացման օրինաչափությունների չիմացության ու չկիրառման արդյունք են: Սրանով է պայմանավորված հանրակրթական դպրոցներում ուսման հանդեպ սովորողների նկատելի անտարբերությունը:

Տարիքային յուրաքանչյուր փուլ բնութագրվում է ոչ միայն իմացական զարգացման որոշակի պոտենցիալ հնարավորություններով, այլ նաև մտածողության տիպով: Այդ տիպի հաշվառումն ուսուցման պրակտիկայում անհրաժեշտ պայման է՝ կրթության յուրաքանչյուր աստիճանում զարգացման բավարար մակարդակ ապահովելու համար: Օրինակ, հանրահայտ է, որ մանկահասակ երեխայի մտածողությունն ակնառու-պատկերավոր (ո՛չ վերացական) բնույթ ունի: Սա նշանակում է, որ այս տարիքի երեխաների ուսուցումն արդյունավետ է եթե այն իրագործվում է պրակտիկ գործունեության միջոցով, որի պայմաններում սովորողը շատ բաներ հասկանում է սեփական փորձով: Համապատասխան դասագրքերն, իրենց հերթին, պետք է հարուստ լինեն նկարազարդման նյութերով, տեքստերը հեղեղված չլինեն սահմանումներով ու բանաձևերով:
Մարդն առհասարակ, երեխաները՝ առավել ևս, հակված են ամեն ինչի մեջ իմաստ տեսնելու: Այն գիտելիքներն են անցնում երկարատև հիշողության ոլորտ, որոնք մարդը գիտակցաբար ցանկացել է յուրացնել: Այսինքն՝ երեխայի համար ուսուցումն արդյունավետ է միայն այն ժամանակ, երբ ինքն է իր կրթության սուբյեկտը. երբ ինքն է գիտակցաբար դնում կրթական նպատակներ և ազատորեն կազմակերպում իր ուսումնական գործունեությունը՝ դրված նպատակներին հասնելու համար: Այս դեպքում է միայն գիտելիքն անձի համար իմաստ ու արժեք ստանում, դառնում հոգևոր հարստություն: Համադրելով համացանցն ու այս պահանջմունքը՝ կանգ առնենք ուսուցման մեթոդների վրա:
Խմբային հետազոտության մեթոդ
Այս մեթոդի կիրառման ընթացքում սովորողները խմբով աշխատում են որևէ թեմայի շուրջ: Նրանց տրվում է ժամանակ՝ 2 օր կամ նույնիսկ մինչև մեկ շաբաթ համացանցի և գրքերի միջոցով թեմայի վերաբերյալ տեղեկություն հավաքելու համար: Մեթոդի հիմքում ընկած է սովորողների փոխօգնության և համագործակցության գաղափարը: Ի տարբերություն մյուս մեթոդների՝ այս դեպքում նպատակը կոնկրետ խնդրի ուսումնասիրությունն է:

Նպատակները
սովորողները՝

- խորությամբ յուրացնում են ուսումնական նյութի բովանդակությունը,սովորում են համակարգված և խորությամբ հետազոտել կոնկրետ խնդիրներ,
- ամրապնդում են վերլուծական կարողությունները,
- սովորում են համագործակցել,
- օգտվում են համացանցից և այլ աղբյուրներից:

Այսպիսով՝ սովորողները յուրացնում են բովանդակությունը՝ զարգացնելով հետազոտական և համագործակցային, նախաձեռնողական, ստեղծագործական, ինքնուրույն աշխատանքի կարողությունները:
Ընթացքը
1. Խմբերի ձևավորումը և թեմայի ընտրությունը
Ուսուցիչը կարող է ընտրել թեմաները, ապա, ըստ սովորողների ընտրության, ձևավորել խմբեր: Կարելի է նաև սկզբում ձևավորել խմբերը, ապա սովորողներին հնարավորություն տալ ընտրելու հետազոտության թեման:
2. Խմբային աշխատանքի պլանավորումը
Այս փուլում սովորողները որոշում են իրենց համատեղ աշխատանքի բովանդակային

ընդգրկումը, մշակում են գործողությունների պլան, որոշում են խմբի անդամների պարտականությունները, նախանշում են այն աղբյուրները, որոնք նպաստելու են հետազոտությանը:

3. Հետազոտության իրականացումը

Սա խմբային հետազոտության ամենաերկար փուլն է: Այս փուլում սովորողները փնտրում են աղբյուրներ, նյութեր, տեղեկատվություն: Այս ընթացքում ուսուցիչն անընդհատ պետք է պարզի, թե ինչ են անում սովորողները, ինչ աջակցության կարիք ունեն:

4. Արդյունքների ամփոփում և ներկայացման նախապատրաստում

Այս փուլում ուսուցիչը պետք է ակտիվ աջակցություն ցուցաբերի: Հնարավոր է, որ սովորողները շեղվեն հետազոտության թեմայից, նրանց պետք է ուղղորդել: Կարելի է խորհուրդ տալ հետազոտության կառուցվածքի վերաբերյալ, օրինակ, աղյուսակներ, գրաֆիկներ օգտագործելու, հետազոտությունը ավելի պատկերավոր դարձնելու վերաբերյալ:

5. Հետազոտության արդյունքների ներկայացում

Այս փուլը երկու հիմնական նպատակ ունի: Սովորողները պետք է լուսաբանեն իրենց կողմից կատարված հետազոտությունը և հետաքրքիր ու հասկանալի ձևով ներկայացնեն այն: Կատարված հետազոտությունը կարելի է ներկայացնել բանավոր, գրավոր, ցուցապաստառներով, համակարգչի միջոցով, պրոյեկտորի, էլեկտրոնային գրատախտակի և այլ միջոցներով: Նախընտրելի է, երբ հնարավորինս շատ միջոցներ են օգտագործվում:

Խմբային հետազոտության գնահատումը

Խմբային հետազոտության արդյունքում գնահատվում են՝ բովանդակությունը, հետազոտական կարողությունները, խմբային աշխատանքի (համագործակցային) հմտությունները, աշակերտների ինքնուրույնությունը,նրանց նախաձեռնությունը;:

Բովանդակության յուրացման գնահատումը

Այս մեթոդի կիրառման կարևոր խնդիրներից է հետազոտվող նյութի բովանդակության յուրացումը: Ուսուցչի համար կարևոր է պարզել, թե սովորողները ինչ չափով են յուրացրել իրենց հետազոտած նյութը: Այդ նպատակով ուսուցիչը կարող է առանձին հարցեր ուղղել սովորողներին, կազմել հարցաթերթիկ և պահանջել լրացնել այն, ապա գնահատել, կարելի է հանձնարարել գրել շարադրություն և այլն:

Այսպես օրինակ , 9-րդ դասարանում գրականության դասի կարելի է առասպելների շուրջ տանել նմանօրինակ աշխատանք: Դասարանը բաժանել խմբերի և հնարավորություն տալ նրանց ընտրել այս կամ այն առասպելը: Խմբերին հանձնարարում ենք համացանցի , հանրագիտարանի, Խորենացու Պատմության միջոցով հավաքել տեղեկություններ իրենց թեմայի շուրջ: Խմբի յուրաքանչյուր անդամ ունի իր պարտականությունները. նրանցից մեկը կներկայացնի տեղեկությունը, մյուսը կպատրաստի պաստառ, երրորդը կնկարի առասպելի կերպարներին, չորրորդը կնշի, թե հայ գրականության մեջ էլ ովքեր են անդրադարձել այդ առասպելին և ինչպիսի ստեղծագործություններ են գրի առել և այլն: Աշխատելով ինքնուրույն նրանք նաև պետք է համագործակցեն և միմյանց ներկայացնեն

կատարած աշխատանքը , որպեսզի գնահատման ժամանակ կարողանան ճիշտ պատասխանել ուսուցչի հարցերին։

Խմբային աշխատանքի (համագործակցության) գնահատումը

Խմբային հետազոտության ընթացքում կարևոր է սովորողների համագործակցային կարողությունների գնահատումը:

Խմբային աշխատանքի (համագործակցության) գնահատման սանդղակ

Հազվադեպ	Միշտ
Խմբի անդամները լսում էին մինյանց	1 2 3 4 5
Խմբի անդամները փոխանցում էին իրենց ձեռքբերած տեղեկատվությունը, քննարկում գաղափարները	1 2 3 4 5
Խմբի անդամները օգնում էին միմյանց՝ հասկանալու նյութը	1 2 3 4 5

Խմբի անդամները կատարում էին խթանող հարցադրումներ	1	2	3	4	5
Խմբի անդամները պարբերաբար կիրառում էին հետադարձ կապ	1	2	3	4	5

ԳՈՒՍ (Գիտեմ – Ուզում եմ սովորել – Սովորել եմ)

ԳՈՒՍ մեթոդի կիրառման ժամանակ անհրաժեշտ է կազմել երեք սյունակից բաղկացած մի աղյուսակ: Աղյուսակի վերևում գրվում է նյութի հիմնական խորագիրը, ապա գծվում են երեք սյունակները՝ համապատասխան վերնագրերով.

օրինակ՝

Մ ո վ ս ե ս Խ ո ր ե ն ա ց ի

-Գիտեմ -Ուզում եմ սովորել -Սովորել եմ

Նյութի ուսումնասիրության ամբողջ ընթացքում այս աղյուսակը կարող է դառնալ սովորողների ուղեցույցը: Ուսուցիչը կարող է այն գծել մեծ թղթի վրա, գրատախտակին կամ էլեկտրոնային գրատախտակին:

Քայլերը.

1. ԳՈՒՍ աղյուսակի վերևում գրվում է թեմայի վերնագիրը: Սովորողներին հարց է ուղղվում, թե ինչ գիտեն տվյալ թեմայի վերաբերյալ: Նրանց ասածները գրանցվում են աղյուսակի առաջին (Գիտեմ) սյունակում:
2. Սովորողներին կրկին հարց է տրվում, թե ինչ կցանկանային իմանալ և ինչ հարցեր ունեն տվյալ թեմայի հետ կապված: Դրանք գրանցվում են աղյուսակի երկրորդ (Ուզում եմ սովորել) սյունաում:
3. Սովորողներն ուսումնասիրում են դասի նյութը և փորձում գտնել իրենց նախնական հարցերի պատասխանները, ապա լրացնում են աղյուսակի երրորդ սյունակը (սովորել եմ):
4. ԳՈՒՍ աղյուսակն ամբողջովին լրացնելուց հետո սովորողներին կարելի է հանձնարարել կազմել գաղափարների քարտեզ:

Մեթոդի առավելությունները.

- ուսուցչին հնարավորություն է տալիս պատկերացում կազմել տվյալ նյութից սովորողի նախնական գիտելիքների մասին,
- սովորողներն անմիջականորեն առնչվում են ուսումնասիրվելիք նյութին, հնարավորություն են ստանում ենթադրություններ կատարելու, ինքնուրույն գործել,
- զարգանում են սովորողների ինքնավերլուծական կարողությունները, նրանք առավել ուշադրությամբ են կարդում, ուսումնասիրում նյութը՝ թեմային առնչվող իրենց հարցերի պատասխանները գտնելու համար,
- սովորողները ձեռք են բերում իրենց արդեն հայտնի և նաև նոր գիտելիքներ:

Երեք բանալի մեկ կողպեք

Խմբերով նստած աշակերտներին հանձնարարվում է անհատական աշխատանք. ուշադիր կարդալ նյութը և ընտրել երեք արտահայտություն կամ նախադասություն, որոնք կարևոր են դասանյութը յուրացնելու համար: Դրանք համարվում են դասի բանալիները: Հանձնարարվում է նաև ընտրել մեկ նախադասություն, որն ամփոփում է ամբողջ նյութը, դա նյութի կողպեքն է: Բնականաբար տարբեր աշակերտներ

կընտրեն տարբեր բանալիներ և կողպեք: Այնուհետև նրանց հնարավորություն տրվում իրենց առանձնացրած բանալիները և կողպեքը համեմատել իրենց զուգընկերոջ ընտրածի հետ և գտնել երկուսի համար ընդունելի տարբերակ: Նույն աշխատանքը հանձնարարվում է կատարել խմբով: Խմբում տարակարծության առկայության դեպքում, ընտրվում է ավելի հիմնավորված տարբերակը: Խմբային աշխատանքից հետո յուրաքանչյուր խմբից մեկը ներկայացնում է խմբի կողմից ընտրված բանալիները և կողպեքը և միաժամանակ հիմնավորում իրենց ընտրությունը: Կարող են լինել նաև սովորողներ, որոնք համաձայն չեն լինի խմբերի ներկայացրած բանալիներին և կողպեքին, նրանց նույնպես պետք է հնարավորություն տալ արտահայտելու սեփական կարծիքը: Ոչ մի սովորողի կարծիք ուշադրությունից դուրս չպետք է մնա: Այս մեթոդով աշխատելիս սովորողների մեջ ձևավորվում է ընտրություն կատարելու, ընտրությունը հիմնավորելու,ինքնուրույն գործելու, ստեղծագործելու, գլխավորը երկրորդականից տարբերելու, համագործակցելու կարողություններ և հմտություններ:

Բերե՛ք բանալի մեկ կողպեք մեթոդը կիրառելի է հատկապես ծավալուն դասանյութի դեպքում:

T - աձև աղյուսակ

Այս մեթոդը կարելի է կիրառել ինչպես իմաստի ընկալման, այնպես էլ կշռադատման փուլում: Նպատակն է ի մի բերել, դասակարգել սովորողների ստացած գիտելիքները՝ համադրելով նախկինում ունեցած գիտելիքների հետ:

T-աձև աղյուսակը օգտագործվում է միևնույն հասկացության, խնդրի երկու կողմերը համեմատելու համար: Այս կարգի մեթոդներից ամենապարզն է և՝ կազմակերպական ձևով, և՝ կառուցվածքով: Շատ այլ մեթոդների նման, այս մեթոդը ևս կարող է կիրառվել անհատապես կամ խմբով աշխատելիս: Իր ձևով T տառը հիշեցնող աղյուսակը կազմված է երկու բաժնից, որտեղ գրանցվում են միևնույն հասկացության, խնդրի հակադիր որակները, դրական կամ բացասական կողմերը: Աղյուսակի այս ձևը շատ հարմար է քննարկումների ժամանակ երկու տարբեր պատասխանների (այո/ոչ, կողմ/դեմ) կամ համադրություն/ հակադրություն արտա-հայտող արձագանքների գրառման համար:

Օրինակ, աշակերտները կարող են անդրադառնալ T-աձև աղյուսակին, երբ պատրաստվում են անհատական կամ խմբովի որևէ նախագիծ իրականացնել՝ կապված ոչ միայն կոնկրետ առարկայի, այլև հասարակական հնչեղություն ունեցող որևէ խնդրի շուրջ:

Դրական կողմեր	Բացասական կողմեր

Մենք իրականացրել ենք Պատմության մեջ տեղ գտած Արշակ Երկրորդի կերպարի միջոցով, որն այլ նկարագրություն ունի գրական ստեղծագործություններում: Աշակերտները ներկայացրեցին Արշակ Երկրորդի ապրած ժամանակաշրջանի Հայաստանը, նրա վարած քաղաքականությունը, թշնամուն և այդ ամենը ներկայացրեցինք S-ձև աղյուսակում ՝ համեմատելով գրական կերպարը և իրական կերպարը:

Т-աձև աղյուսակը ճկուն է նաև այն իմաստով, որ դրա օգտագործումը արդյունավետ է դասերի տարբեր փուլերի ընթացքում և տարբեր առարկաներ ուսումնասիրելիս՝ թե՛ բնագիտական, թե՛ հումանիտար:
Այս մեթոդով հաջողությամբ կարելի է աշխատել, օրինակ, քանակական և դասական թվականների ուղղագրության ուսուցման ժամանակ: Սովորողների ուժերով ստեղծելով նմանատիպ Т - աձև աղյուսակ՝ այն կարելի է մշտապես ունենալ դասասենյակում:

ԳԼՈՒԽ 3. ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Պատմության դասավանդման մեթոդիկան՝ որպես պատմական գիտելիքների դասավանդման ու դաստիարակման միջոց, մարդկությանը հայտնի է եղել դեռևս վաղ անցյալից, երբ միջցեղային կռիվների ընթացքում ցեղային ավագանին երիտասարդ ցեղերի ոգին բարձր պահելու նպատակով նրանց դաստիարակում էր պատերազմներում սխրանքներ գործած, հերոսացած ցեղակիցների օրինակով: Հետագայում, երբ ձևավորվեցին պետությունները, և հանդես եկան դասակարգերը, ունևոր վերնախավի ներկայացուցիչները տնտեսական, քաղաքական, գաղափարական առումով իրենց դիրքերը և դասային արտոնությունները ամրապնդելու նպատակով պատմական հիմնավորումների կարիք զգացին: Պատմությունը աստիճանաբար մուտք գործեց դպրոց, պատմության դասավանդման մեթոդիկան գիտական մեկնաբանության կարիք ունեցավ[1]: Հայաստանում պատմության դասավանդման մեթոդիկայի վերաբերյալ մեզ են հասել տեղեկություններ Օղյումպ քրմից և հույն պատմիչներից, որոնք նշում են, որ Հայաստանի մեհենական դպրոցներում հունական դպրոցի նման դասավանդում էին տարբեր մեթոդներով: Քրիստոնեության ընդունումից հետո հեթանոսական սրբավայրերի, հայոց գրի ու գրականության հետ ոչնչացվեց հայ պատմամեթոդական մտքի վերաբերյալ ստեղծված ժառանգությունը: Մաշտոցի կողմից հայոց գրերի ստեղծումից հետո հայ պատմագիտական միտքը թեև թռիչքային զարգացում ունեցավ, սակայն մեթոդական մտքի վերաբերյալ տեղեկությունները շատ աղոտ են: Խոսելով իր ուսուցչի մասին՝ Կորյունը գրում է. «Ճշմարիտ ուսուցիչները իսկապես սովոր են իրենց առաքինությունները աշակերտների համար օրինակ դարձնելու»:

Պատմությունը մարդու ձևավորման և կայացման խնդիր է լուծում: Պատմության դասավանդումը պատմության ուշադրության կենտրոնում է: Կարևոր է, թե ինչպես է դասավանդվում պատմությունը: Օրինակ՝ ԽՍՀՄ–ի շրջանում պատմությունը սուբյեկտիվացված էր և դոգմացված: Պատմության դասավանդման մեթոդիկայի նպատակը ներկայացված է պետության մշակած հայեցակարգում: Կրթական հայեցակարգը ձևավորվում է սահմանադրությունից: Մեթոդիկան կապված է այս փաստաթղթերի հետ: Ուսուցման նյութի բովանդակության վրա ազդում է գաղափարական կողմը: Պատմության կրթությունն ունի նպատակներ՝ քաղաքացու դաստիարակություն, հայրենասիրություն, ազգասիրություն, փոխանցել գիտելիքներ ներկա ժամանակներում կատարվող իրողություններից, հայկական մշակութային նվաճումները համեմատել աշխարհի մշակութային նվաճումների հետ[1]:

---

[1]Գ. Թամամյան, Պատմության ուսուցման արդյունավետության մի քանի հարցեր, Եր., 1972:

Պատմական գիտելիքների ձևավորման գործընթաց

1. Սովորողների պատմական գիտելիքների կառուցվածքը:

2. Պատմական փաստերի մասին պատկերացումներ ձևավորելու մեթոդիկա:

3. Ժամանակագրական պատկերացումների ձևավորման մեթոդիկա:

4. Պատմական փաստերի տեղադրումը տարածության մեջ: Քարտեզի հետ աշխատելու մեթոդիկա:

5. Պատմական հասկացությունների ձևավորումը պատմության դասերին:

6. Կարողությունների ձևավորման մեթոդիկա: Սովորողների աշխարհայացքի ձևավորման գործում կարևորագույն նշանակություն ունեն պատմական գիտելիքները, քանզի նրանցում է կենտրոնացած մարդկության ողջ սոցիալական փորձը, որը անհրաժեշտ է արդի բարդ ու հակասական իրադարձությունները հասկանալու համար[2]:

Պատմական գիտելիքների միջոցով հնարավոր է՝

1. ձևավորել պատկերացումներ պատմական իրականության մասին,

2. ձևավորել մարդկային հասարակության զարգացման գիտական պատկերը,

3. ճանաչել ժամանակակից հասարակությունը,

4. անձի ձևավորումը:

Պատմական գիտելիքների կառուցվածքը.

• պատմական պատկերացումներ,

• պատմական հասկացություններ,

• պատմական իմացության մեթոդաբանություն: Պատմական պատկերացումներ: Սովորողների գիտակցության մեջ պատմական փաստերի, իրադարձությունների, անհատների առանձնահատկությունների, ժամանակի ու տարածության մեջ տեղադրման արտացոլումն է: Պատմական պատկերացումները միշտ սուբյեկտիվ են: Պատմական գիտելիքների մեծ մասը պատկերացումների

---

[1] Հ. Ղևոնդյան, Պատմության դասավանդման մեթոդիկա, Եր., 2001թ.:

[2] Հանրակրթության պետական կրթակարգ. չափորոշիչներ, ծրագրեր, մեթոդներ, Եր., 2007 թ.:

մակարդակում է: Դրանց միջոցով վերականգնվում և բնութագրվում են պատմական փաստերը: Պատմական հասկացություններ: Սովորողների գիտակցության մեջ պատմական փաստերի առավել կարևոր, համակարգված բնութագրիչների արտացոլումն է, ինքնուրույնության ձևավորում: Պատմական հասկացությունները օբյեկտիվ են, ինչից հետևում է, որ դրանք բոլոր աշակերտների մոտ նույնն են: Պատմական իմացության մեթոդաբանությունը ներառում է գիտելիքներ պատճառահետևանքային կապերի, պատմական զարգացման օրինաչափությունների մասին, ինչպես նաև պատմական նյութերի հետ աշխատելու կարողություններ: Հմտություններին և կարողություններին տիրապետելը աշակերտների ուսումնառության արդյունավետության բարձրացման կարևոր միջոց է:

Այսպիսով՝ պատմական գիտելիքները պատմական պատկերացումների, հասկացությունների, պատմական զարգացման օրինաչափությունների և պատմական նյութի հետ աշխատելու միջոցների բարդ փոխկապվածություն է: Առավել մանրամասն քննարկենք ժամանակագրական պատկերացումների ձևավորման մեթոդիկան և պատմական փաստերի տեղադրումը տարածության մեջ՝ քարտեզի հետ աշխատելու մեթոդիկա[1]: Ժամանակագրության մեկնաբանման միջոցներ: Ժամանակային պատկերացումների ձևավորման համար անհրաժեշտ է կենտրոնացնել աշակերտների ուշադրությունը գլխավոր փաստերի վրա, գրանցել դրանք տետրում՝ նշելով տարեթիվը: Կարևոր նշանակություն ունեն ժամանակագրական աղյուսակները, որոնք աշակերտները կազմում են ինքնուրույն:: Աղյուսակը կազմվում է աշակերտական տետրի վերջին 5–6 էջերում: Էջը կիսվում է 2 մասի, առաջինում նշվում է տարեթիվը, երկրորդում՝ իրադարձությունը: Այսպիսի գրառումները նպաստում են նյութի կրկնությանը և գիտելիքների ամրապնդմանը, ինչպես նաև ինքնուրույն աշխատանքների զարգացմանը: Պատմական տարեթվերի հետ աշխատելիս օգտակար է աշխատանքը գրատախտակի հետ: Ընդհանրապես ընդունված է համարել, որ յուրաքանչյուր դասի գրատախտակին պետք է նշված լինի դասի թեման, պլանը, հիմնական հասկացությունները, տարեթվերը, հարցերը: Տարեգրության ուսուցման ժամանակ ուսուցիչը կարող է ստեղծել այնպիսի իրադրություններ, որ աշակերտները տրամաբանելով հիշեն տարեթվերը: Դա հնարավոր է աղյուսակներ կամ խնդիրներ կազմելու և լուծելու միջոցով: Օրինակ՝ կարելի է առաջադրել հարց, թե այս ինչ իրադարձությունը տեղի է ունեցել …. տարի առաջ, ուրեմն ո՞ր թվականին է դա կատարվել: Գիտելիքների ստուգման համար կարելի է հանձնարարել շարադրություն՝ արաջարկելով ոչ թե թեմա, այլ տարեթվեր: Տարեթվերը հնարավոր է զուգակցել աշխարհագրական տերմինների, անվանումների, պատմական գործիչների անունների, այլ հասկացությունների հետ: Արդյունավետ հանձնարարություն համարվում է համեմատական սինխրոն աղյուսակների կազմումը: Դա թույլ է տալիս համեմատելով իրադարձությունների տարեթիվը և տևողությունը, կատարել եզրակացություններ դրանց

օրինաչափությունների և առանձնահատկությունների վերաբերյալ: Պատմության դասին կարելի է կիրառել 2 տեսակի սինխրոնիզացիա՝ տարեթվերով և իրադարձություններով: Տարեգրական թելադրություն:

1. Տարեթիվը գրել քարտի կամ գրատախտակի վրա – աշակերտները պատասխանը նշում են տետրերում:

2. Նշել որևէ իրադարձություն – աշակերտները գրում են տարեթիվը:

3. Համադրել նշված հանձնարարությունները:

Գիտելիքների ստուգման ձևերից են թեստերը: Նրանց կիրառումը օգտակար է տարեթվերով հագեցած թեմաների ուսուցման ժամանակ: Առաջադրանքները բազմազան են: Կարելի է առաջարկել համադրած տեղադրել մի քանի պատմական փաստեր և տարեթվեր: Կարելի է թվարկել մի քանի պատմական փաստ կամ իրադարձություն՝ դիմացը նշելով մի քանի տարեթիվ, և առաջարկել ընդգծել միակ մեկ ճիշտը, կարող է նշվել ուղղակի փաստը՝ պահանջելով որոշել տարեթիվը: Ժամանակային պատկերացումների ձևավորման հարցում կարևոր է սովորեցնել տարեթվեր մտապահելը: Կարեի է նշել երեք մեթոդ.

1. գիտակցված մտապահում,

2. մտապահել՝ հենվելով որոշակի կլոր թվերի վրա,
3. միաժամանակ տեղի ունեցած իրադարձությունները զուգահեռ նշել տետրում: Զուգահեռության սկզբունքը կարելի է կիրառել որոշակի պարբերությամբ տեղի ունեցած փաստերի դեպքում, օրինակ՝ մեկ, տասը, հարյուր տարի անց – 1380 /Կուլիկովոյի ճակատամարտը – 1480 – զորքերի կանգը Ուղրա գետի մոտ: Մտապահելու մեթոդներից է ասոցիատիվ հիշելու մեթոդը:

Օգտագործվում է մեխանիկական հիշողության մեթոդը, որի ժամանակ օգտակար են խաղերը, աղյուսակները, քարտերը: Պատմական փաստերի տեղադրումը տարածության մեջ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

1. Սովորողների մեջ ինքնուրույնության , նախաձեռնության ունակությունների զարգացմանը նպաստում են ինքնուրույն աշխատանքի մեթոդները;

2. Պրոբլեմային ուսուցման կազմակերպումը նպաստում է նոր գիտելիքների յուրացմանը, դրանք վերածում կարողությունների և հմտությունների , տրամաբանական մտածողության, որոնողական ընդունակությունների զարգացմանն ու հետազոտական ակտիվությանը, ստեղծագործական կարողությունների ձևավորմանը:

3. Ուսուցման տեխնոլոգիան կամ կիրառվող մեթոդները լավագույնն են, եթե լավագույնս նպաստում են մարդու ինքնուրույնության ձևավորմանը, հիմնարար գիտելիքների ձեռքբերմանն ու ստեղծագործական կարողությունների զարգացմանը:

4. Ուսումնահետազոտական գործունեությունը ենթադրում է սովորողի ստեղծագործական ընդունակությունների արթնացում ու ակտիվացում:

5. Պատմական գիտելիքները պատմական պատկերացումների, հասկացությունների, պատմական զարգացման օրինաչափությունների և պատմական նյութի հետ աշխատելու միջոցների բարդ փոխկապվածություն է:

Ժամանակակից դպրոցում դասի արդյունավետ անցկացման և դասի նպատակների հասնելու համար պարտադիր է դարձել զանազան մուլտիմեդիական միջոցների, ինտերակտիվ քարտեզների, տեսասահիկների կիրառումը դասի ժամանակ, աշակերտների ակտիվ ուսուցման կիրառումը, աշակերտին սոսկ ուղղություն տալով՝ նրան ինքնուրույն որոնողական աշխատանքի մղելն ու դասից դուրս աշակերտի ինքնուրույն աշխատանքի խթանումը: Ակտիվ ուսուցումը ենթադրում է այնպիսի մեթոդների համակարգի կիրառում, որը ոչ թե նախատեսում է ուսուցչի կողմից պատրաստի գիտելիքի մատուցում, մտապահում և վերարտադրություն, այլև ուսուցման ակտիվ ճանաչողական և պրակտիկ գործունեության ընթացքում գիտելիքների և հմտությունների ինքնուրույն ձեռքբերում:

Նորարարական աշխատանքի հաջողությունը, արդյունավետությունը և դրա ազդեցությունը դպրոցի զարգացման մեխանիզմի բովանդակության նորացման հարցում ամբողջովին կախված է կրթական գործընթացում համապատասխանության և նորարարության արդիականությունից, օգտակարությունից և իրագործելիությունից: Նրանք արդեն համապատասխան են միայն այն պատճառով, որ ունեն ընդհանուր կրթական նպատակ - աշակերտների անհատական կրթությանն ուղղված ուսուցում և սովորողների դաստիարակություն, բացի դրանից դրանք պոտենցիալ օգտակար են, քանի որ իրականացվում են բազմամասնագիտական դպրոցի համակարգի ստեղծման միջոցով, ծնողների սոցիալական պատվերի հաշվառումով և աշակերտների ընտրությամբ: Այնպես որ, նորարարական աշխատանքը միշտ բերում է ուսուցիչների և աշակերտների անհատական ներուժի զարգացման փոփոխություններ, քանի որ այն նպաստում է դրդապատճառի բարձր մակարդակի զարգացմանը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Առարկայական ծրագրեր և չափորոշիչներ

2. Ամիրջանյան Յու. Ա, Սահակյան Ա. Ս. , Մանկավարժություն, Երևան, 2005,

3. Թամամյան Գ, Պատմության ուսուցման արդյունավետության մի քանի հարցեր, Եր.,1972:
4. Մանկավարժություն (թարգ. Հ. Հարությունյան), Երևան, 1948
5. Պետրոսյան Հ., Մանկավարժական ժամանակակից տեխնոլոգիաներ, Ե., 2012

6. Ղաջոյան Հ. , Երեխաները տարիքն ի վեր, Երևան , 2002,

7. Ղևոնդյան Հ, Պատմության դասավանդման մեթոդիկա, Եր., 2001թ.:

8. Бабанский Ю. К. , Методика обучения в совр. общеобразоват. школе, Москва, 1989

,Гузеев В. В., Методы и организационные формы обучения, М., 2001. 5

9. Скаткин М. Н. , Проблемы современной дидактики, 2-е изд. - Москва, 1984: